# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

վիճակագրության պետական խորհրդի նիստի

-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------

**28.02.2011թ.** **ժ.11: 00**

**Մասնակցում էին՝**

Ս.Մնացականյան *(Խորհրդի նախագահ),* Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան *(Խորհրդի անդամներ)*

Հ. Գրիգորյան *(Խորհրդի քարտուղար)*

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Գ. Հովսեփյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ), Ն.Մուշեղյան (վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Գ. Պետրոսյան (գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ):

**Օրակարգի նախագծում ՝ հինգ հարց.**

1. «2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:
/Զեկուցող՝ Ն. Մուշեղյան/

2. «Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվառման կարգերում փոփոխություններ կատարելու մասին» հարցը:
/Զեկուցող՝ Գ. Պետրոսյան/

3. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի հունիսի 2-ի թիվ 17-Ա որոշումն ուժը կորցնելու և «Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալների հաստատման վերաբերյալ» հարցը:
/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.
Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2011 թվականի փետրվարի 2–ից 4-ը տեղի ունեցած «ՄԱԿ-ի վիճակագրության վարչության, Եվրոստատի, Առևտրի համաշխարհային կազմակերպության և ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կոնֆերանսի (UNCTAD) կողմից կազմակերպած «Գլոբալ առևտրի չափումը. արդյո՞ք մենք ունենք ճիշտ թվեր» խորագրով առևտրի վիճակագրության գլոբալ համաժողովին» մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող՝ Ա.Շաբոյան/*

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:
/Քվեարկության արդյունքները-կողմ՝7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

1. «2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:
/Զեկուցող՝ Ն. Մուշեղյան/

**Որոշեցին՝**

հաստատել 2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

2. «Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվառման կարգերում փոփոխություններ կատարելու մասին» հարցը:
/Զեկուցող՝ Գ. Պետրոսյան/

**Որոշեցին՝**
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 23.12.2009թ. թիվ 49-Ա որոշմամբ հաստատված «Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարման կարգ»-ում կատարել փոփոխություններ:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**
**3.** «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի հունիսի 2-ի թիվ 17-Ա որոշումն ուժը կորցնելու և «Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալների հաստատման վերաբերյալ» հարցը:
/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/
**Որոշեցին՝**
հաստատել «Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված իրական հատվածի (ազգային հաշիվներ, սպառողական և արտադրանքի ինդեքսներ, արտադրության ինդեքս, զբաղվածության, գործազրկության, աշխատավարձ) և արտաքին հատվածի (վճարային հաշվեկշիռ, արտաքին առևտուր, արտաքին պարտք, միջազգային ներդրումային դիրք), սոցիալ-ժողովրդագրական բնույթի տվյալների (բնակչություն) մեթատվյալների խմբերը՝ համաձայն հավելվածի և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի հունիսի 2-ի «Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալների հաստատման վերաբերյալե թիվ 17-Ա որոշումը:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**
**4.** Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.
Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2011 թվականի փետրվարի 2–ից 4-ը տեղի ունեցած «ՄԱԿ-ի վիճակագրության վարչության, Եվրոստատի, Առևտրի համաշխարհային կազմակերպության և ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կոնֆերանսի (UNCTAD) կողմից կազմակերպած «Գլոբալ առևտրի չափումը. արդյո՞ք մենք ունենք ճիշտ թվեր» խորագրով առևտրի վիճակագրության գլոբալ համաժողովին» մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող՝ Ա.Շաբոյան/*
**Որոշեցին՝**
արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումը ընդունել ի գիտություն
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ